ԿԱՐԾԻՔ

Գործուն զղջալու հիմքով ծանր և առանձնապես ծանր հանցագործություններ կատարած անձանց քրեական պատասխանատվությունից ազատելու վերաբերյալ

ՀՀ Ազգային ժողովի կողմից 2023թ.-ի հուլիսի 12-ին երկրորդ ընթերցմամբ և ամբողջությամբ ընդունված «ՀՀ քրեական օրենսգրքում լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի առնչությամբ

2023թ. հուլիսի 11-ին և 12-ին[1] Ազգային ժողովն արտահերթ նստաշրջանի շրջանակներում արտահերթ կարգով առաջին և երկրորդ ընթերցմամբ ամբողջությամբ ընդունել է ՀՀ քրեական օրենսգրքում լրացումներ կատարելու մասին ՀՀ օրենքի նախագիծը[2], որով նախատեսվել է ՀՀ քրեական օրենսգրքի 81-րդ հոդվածը լրացնել նոր մասերով, որոնցով սահմանվել է, որ.

«1.1. Եթե անձի առաջին անգամ կատարած հանցանքը ծանր կամ առանձնապես ծանր հանցանք է, ապա հանցավորի դերի, հանցանքը կատարելիս կամ դրանից հետո նրա վարքագծի եւ այլ հանգամանքների հետ կապված բացառիկ գործոնների առկայության դեպքում, նա կարող է ազատվել քրեական պատասխանատվությունից, եթե համագործակցում է քրեական հետապնդման մարմինների հետ, չի վիճարկում իրեն մեղսագրվող արարքը, վնաս պատճառած լինելու դեպքում հատուցել կամ այլ կերպ հարթել է հանցագործությամբ պատճառված վնասը: Բացառիկ կարող են ճանաչվել ինչպես առանձին մեղմացնող հանգամանքները, այնպես էլ այդ հանգամանքների համակցությունը:

1.2. Սույն հոդվածի 1.1.-ին մասով նախատեսված հիմքով անձը չի կարող ազատվել քրեական պատասխանատվությունից սույն օրենսգրքի 133-154-րդ հոդվածներով, 188-րդ հոդվածով, 196-րդ հոդվածի 2-րդ մասով, 308-րդ հոդվածով, 441-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետով, 419-420-րդ հոդվածերով, 425-րդ հոդվածով, 450-րդ հոդվածով, 522-523-րդ հոդվածներով, 549-րդ հոդվածի 2-րդ եւ 3-րդ մասերով, 550-րդ հոդվածի 2-րդ եւ 3-րդ մասերով նախատեսված հանցանքներ կատարելու, ինչպես նաեւ այնպիսի հանցանք կատարելու դեպքում, որի համար նախատեսված է նաեւ ցմահ ազատազրկում:

1.3. Եթե հանցագործությունից տուժողը 14 տարին չլրացած անձ է կամ հոգեկան առողջության խնդիրների կամ մտավոր զարգացման մեջ հետ մնալու հետեւանքով լրիվ կամ մասնակիորեն զրկված է իր դեմ ուղղված հանցագործության բնույթն ու հետեւանքները գիտակցելու կամ իր վարքագիծը ղեկավարելու հնարավորությունից, ապա նրա դեմ ուղղված հանցանք կատարած անձը սույն հոդվածի 1.1.-ին մասով նախատեսված հիմքով չի կարող ազատվել քրեական պատասխանատվությունից:»:

Գտնում ենք, որ ընդունված օրենքը հակասում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը, Հայաստանի Հանրապետության կողմից վավերացված միջազգային մարդու իրավունքների կոնվենցիաներով երաշխավորված մարդու իրավունքների

---

[1] ՀՀ ԱԺ ութերորդ գումարման արտահերթ նստաշրջան, 12.07.2023թ., https://www.youtube.com/watch?v=a0VO45S7OyM

[2] ՀՀ Ազգային ժողով, ՀՀ քրեական օրենսգրքում լրացումներ կատարելու մասին ՀՀ օրենքի նախագիծ, http://parliament.am/draft_history.php?id=14369

պաշտպանության չափանիշներին, մասնավորապես՝ հանցագործությունից տուժած անձի իրավունքների պաշտպանության երաշխիքներին, ինչպես նաև հանցավորության դեմ պայքարի համատեքստում Հայաստանի Հանրապետության միջազգային պարտավորություններին:

Գործուն զղջալը՝ որպես քրեական պատասխանատվությունից ազատելու ինքնուրույն տեսակ նախատեսված էր 2003թ.-ի ապրիլի 18-ին ընդունված Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքով 72-րդ հոդվածով, որի 1-ին մասի համաձայն՝ «Առաջին անգամ ոչ մեծ ծանրության կամ միջին ծանրության հանցանք կատարած անձը կարող է ազատվել քրեական պատասխանատվությունից, եթե նա հանցանք կատարելուց հետո կամովին ներկայացել է մեղայականով, աջակցել է հանցագործությունը բացահայտելուն, հատուցել կամ այլ կերպ հարթել է հանցագործությամբ պատճառված վնասը»:

Արդեն 2022թ.-ի մայիսի 5-ին ընդունված ՀՀ քրեական օրենսգրքի 81-րդ հոդվածի 1-ին մասով սահմանվել է. «**Եթե անձն առաջին անգամ է հանցանք կատարել**, ապա կարող է ազատվել քրեական պատասխանատվությունից, եթե նրա կատարած արարքը ոչ մեծ կամ միջին ծանրության հանցանք է, և նա համագործակցում է քրեական հետապնդման մարմինների հետ, չի վիճարկում իրեն մեղսագրվող արարքը, վնաս պատճառած լինելու դեպքում հատուցել կամ այլ կերպ հարթել է հանցագործությամբ պատճառված վնասը»:

Այս առումով, Հայաստանի Հանրապետության քրեական օրենսդրությամբ քրեական պատասխանտվությունից գործուն զղջալու ինստիտուտի կիրառմամբ գործադրվել են բացառապես ոչ մեծ և միջին ծանրության հանցագործությունների դեպքերում:

Այսպես, Հանցագործությունների և իշխանության չարաշահման զոհերի հանդեպ արդարադատության հիմնարար սկզբունքների հռչակագրով[3] ՄԱԿ Գլխավոր ասամբլեան, գիտակցելով, որ հանցագործությունների և իշխանության չարաշահման հետևանքով ամբողջ աշխարհում վնաս է հասցվում միլիոնավոր մարդկանց և որ այդ զոհերի իրավունքները պատշաճ կերպով չեն ճանաչվում, կոչ է անում անդամ պետություններին ստեղծել և ամրապնդել հանցագործությունների կատարման համար մեղավորներին բացահայտելու, դատական հետապնդման ենթարկելու և պատժելու միջոցներ, արգելք մտցնել չարաշահումներին նպաստող գործելակերպի և ընթացակարգերի վրա:

Եվրոպայի խորհրդի խորհրդարանական վեհաժողովի՝ «Մարդու իրավունքները եվրոպայում. անպատժելիության վերացման անհրաժեշտությունը» 1675 (2009) բանաձևի համաձայն՝ մարդու իրավունքների լուրջ խախտումներ թույլ տված բոլոր անձինք պետք է պատասխանատվության ենթարկվեն իրենց գործողությունների համար[4]: ԵԽԽՎ-ն արձանագրել է, որ մարդու իրավունքների լուրջ խախտումների համար անպատժելիության դեմ պայքարը Եվրոպայի Խորհրդի և բոլոր պետական և միջազգային իրավապահ մարմինների առաջնահերթություններից է: Անպատժելիությունը պետք է վերացվի ինչպես որպես անհատական արդարադատության խնդիր, այնպես էլ հետագայում մարդու իրավունքների խախտումների կանխման գործիք[5]:

---

[3] ՄԱԿ, Հանցագործությունների և իշխանության չափաշահման զոհերի հանդեպ արդարադատության հիմնական սկզբունքներ, 1985թ., https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=1897

[4] PACE, State of human rights in Europe: the need to eradicate impunity, https://pace.coe.int/en/files/17756/html

[5] Նույն տեղում, կետ 6:

Եվրոպայի խորհրդի նախարարների կոմիտեի «Մարդու իրավունքների լուրջ խախտումների համար անպատժելիությունը վերացնելու վերաբերյալ» Ե ուղեցույցում[6] արձնագարվել է, որ պետությունները պետք է պայքարեն անպատժելիության դեմ՝ որպես զոհերի համար արդարադատության և որպես մարդու իրավունքների հետագա խախտումները զսպող և արդարադատության համակարգում իրավունքի գերակայության և հանրային վստահության ապահովման միջոց: Այն վերահաստատել է, որ մարդու իրավունքների լուրջ խախտումների համար բոլոր պատասխանատուները պետք է պատասխանատվության ենթարկվեն իրենց գործողությունների համար: Ավելին, պատասխանատվության բացակայությունը խրախուսում է հանցագործությունների կրկնությունը, քանի որ հանցանք գործած անձինք և մյուսները ազատ են կատարել հանցագործություններ առանց պատասխանատվության ենթարկվելու վախի, ինչպես նաև վերահաստատվել է, որ մարդու իրավունքների լուրջ խախտումների համար պատասխանատուների անպատժելիությունը տուժողներին պատճառում է լրացուցիչ տառապանքներ, ինչպես նաև անպատժելիության դեմ պայմքարը պետք է տարվի տուժողների համար արդարության գործիք, ինչպես նաև նոր խախտումների կանխարգելման գործիք:

Ավելին, Մարդու իրավունքների եվրոպական դատարանն իր գրոծերով արձանագրել է, որ պետությունները, այդ թվում՝ Հայաստանի Հանրապետությունը, պարտավոր են իրականանցել հանցագործությունների արդյունավետ քննություն, որը կկարողանա հանգեցնել փաստերի հաստատմանն ու պատասխանատուների բացահայտմանն ու պատժին: […] Չնայած ոչ բոլոր քրեական հետապնդումների համար է սահմանված բացարձակ պարտականություն՝ հանգելու դատապարտման կամ որոշակի ազատազրկման, քննության ցանկացած բացթողում, որը կասկածի տակ է դնում գործի հանգամանքների հաստատման և պատասխանատուների բացահայտման հնարավորությունը, չի համապատասխանում արդյունավետության պահանջին: Ներպետական դատարանները չպետք է որևէ պարագայում թույլ տան, որպեսզի կյանքի համար վտանգավոր հանցագործությունները կամ ֆիզիկական և հոգեբանական անձեռմխելիության նկատմամբ ծանր հարձակումները մնան անպատիժ (Öneryıldız v. Turkey [GC], no. 48939/99, §§ 95-96, ECHR 2004-XII; Mojsiejew v. Poland, no. 11818/02, § 53, 24 March 2009; Dimitrov and Others v. Bulgaria, no. 77938/11, § 142, 1 July 2014):

Միաժամանակ, Մարդու իրավունքների եվրոպական դատարանն արձանագրել է, որ թեև ներպետական դատարաններն ունեն հայեցողություն պատժի նշանակման հարցում, սակայն […] Դատարանը իրավասու է գնահատել արարքի ծանրության և կիրառված պատասխանատվության/պատժի համաչափությունը: Հակառակ պայմաններում, պետության՝ արդյունավետ քննություն իրականացնելու պարտավորությունը կկորցնի իր իմաստը, և վերոգրյալ դրույթներով նախատեսված իրավունքները պրակտիկայում անարդյունավետ կլինեն (Enukidze and Girgvliani v. Georgia, no. 25091/07, §268, 26 April 2021).

Ավելին, անհրաժեշտ է հաշվի առնել, որ ՀՀ քրեական օրենսգիրքը նախատեսում է ծանր և առանձնապես ծանր հանցագործությունների ցանկ, որոնք կարող են կատարվել նաև/կամ բացառապես պաշտոնատար անձանց, այդ թվում՝ իրավապահ համակարգի ներկայացուցիչների կողմից, որոնց առնչությամբ գործուն զղջալու ինստիտուտի կիրառման

[6] Committee of Ministers, Guidelines: Eradicating impunity of serious human rights violations, https://rm.coe.int/1680695d6e

միջոցով քրեական պատասխանատվությունից ազատելը խնդրահարույց է ոչ միայն հանցագործոների անհատական քրեական պատասխանատվության չենթարկվելու համատեքստում, այլև պետությոն՝ անպատժելիության դեմ պայքարի պարտավորության համատեքստում, քանի որ հանցագործություն գործած անձինք կարող են կարծել, որ վայելում են անպատժելիություն պաշտոնի բերումով, և պահպանելու իրավապահ համակարգի նկատմամբ հանրային վստահությունը և հարգանքը: Այս համատեքստում, Դատարանն անընդունելի է համարում և հանրությանն ուղղված սխալ ազդակ է, որ մարդու իրավունքների լուրջ խախտումների պատասխանատուները պահպանում են ապագայում հանրային պաշտոն զբաղեցնելու հնարավորությունը:

Այս համատեքստում օրենքի հեղինակների հիմնավորումը, որ սույն կարգավորումները կնվազեցնեն ինչպես նախաքննության մարմինների, այնպես էլ դատարանների ծանրաբեռնվածությունը, որևէ կերպ չի արդարացնում ծանր և առանձնապես ծանր հանցագործությունների, այդ թվում՝ կյանքի և առողջության դեմ ուղղված հանցագործությունների, կոռուպցիոն և պաշտոնեական հանցագործությունների համար անպատժելիության ու այս խումբ հանցագործություններից տուժած անձանց իրավունքների ու շահերի ոտնահարմանն ուղղված այս օրենսդրական կարգավորումների ընդունումը:

Օրենքի նախագիծը հիմնավորվել է նաև նրանով, որ ՀՀ քրեական օրենսգրքի 72-րդ հոդվածով՝ **օրենքով նախատեսվածից ավելի մեղմ պատիժ նշանակելու դեպքում, օրենսդիրը հանցագործության ծանրության աստիճանին չի անդրադառնում, ինչպիսի մոտեցում պետք է ցուցաբերվի նաև գործուն զղջալու դեպքում**: Այս առումով նշենք, որ օրենքով նախատեսվածից ավելի մեղմ պատիժ նշանակելը ենթադրում է դատարանի կողմից պատժի նշանակում, որը գործադրվում է բացառիկ հանգամանքների առկայության դեպքում և հանցանք կատարած անձը ենթարկվում է քրեական պատասխանատվության ու պատժի՝ դրանց բոլոր իրավական հետևանքներով: Մինչդեռ, գործուն զղջալը քրեական պատասխանատվությունից ազատելու տեսակ է, որի պարագայում հանցանք կատարած անձի նկատմամբ քրեաիրավական ներգործության միջոցներ ընդհանրապես չեն կիրառվում, ինչը ծանր կամ առանձնապես ծանր հանցագործությունների պարագայում, իրավաչափ չէ: Երկու դեպքում էլ բացառիկ հանգամանքների առկայության և քրեական հետապնդման մարմինների հետ համագործակցության պայման նախատեսելը կարող է հանգեցնել այդ կառուցակարգերի կամայական կիրառման խնդիրների:

Քրեական հետապնդման մարմինների հետ համագործակցության առումով նշենք, որ առաջարկվող լրացումը կարող է խոչընդոտել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքում տեղ գտած որոշ կառուցակարգերի կիրառմանը, քանի որ արդեն իսկ նախատեսված են համագործակցության վերաբերյալ խրախուսական դրույթներ, օրինակ՝ ըստ գործող օրենսդրության՝ համագործակցությունը կարող է օրենքով նախատեսվածից ավելի մեղմ պատիժ նշանակելու հիմք լինել, բացի այդ, ՀՀ քրեական օրենսգրքի 77-րդ հոդվածի 3-րդ և 4-րդ մասերով նախատեսվում է պատիժ նշանակելը համագործակցության վարույթի դեպքում, որի դեպքում նշանակվում է առավել մեղմ պատժատեսակի նվազագույն չափը կամ ժամկետը, օրենքով նախատեսվածից ավելի մեղմ պատիժ, կամ նշանակված պատիժը պայմանականորեն չի կիրառվում: ՀՀ քրեական օրենսգրքի 84-րդ հոդվածով նախատեսված պատիժը պայմանականորեն չկիրառելու կառուցակարգը նույնպես կարևոր է, քանի որ դրանով ծանր կամ առանձնապես ծանր հանցանք կատարած անձը դատարանի կողմից կարող է ազատվել պատիժը կրելուց:

Ինչպես նշվում է նախագծի հիմնավորումներում, իրապես, 2003թ.-ին ընդունված ՀՀ քրեական օրենսգրքի 72-րդ հոդվածի 2-րդ մասով առկա էր կարգավորում այն մասին, որ նաև այլ տեսակի հանցանք կատարած անձը քրեական պատասխանատվությունից կարող էր ազատվել քրեական օրենսգրքի Հատուկ մասի հոդվածով հատկապես նախատեսված դեպքերում: Մինչդեռ, նոր քրեական օրենսգրքի իրավակարգավորումների շրջանակներում **բացակայում է ընդհանուր մասի այն հիմքը, որով անձն ազատվում է քրեական պատասխանատվությունից**, այն պայմաններում, երբ քրեական օրենսգրքի հատուկ մասի տարբեր հոդվածներով փաստացի սահմանվում են քրեական պատասխանատվությունից ազատելու դեպքեր, որոնք, ըստ էության, գործուն զղջալու հատուկ դրսևորումներ են (օրինակ՝ 315-րդ հոդվածը (պատանդ վերցնելը կամ պահելը): Հենց այս բացն էլ կարծես փորձ է կատարվել լրացնել առաջարկվող նախագծով (նախատեսելով այն անձանց շրջանակը որոնց նկատմամբ նշված իրավակարգավորումը չի կարող կիրառվել և այլն), որում առկա ձևակերպումներն ու առաջարկվող մեխանիզմները, սակայն, բավարար չափով հիմնավորված չեն և չեն լրացնում ՀՀ քրեական օրենսգրքի ընդհանուր և հատուկ մասերի միջև եղած վերը նշված անհստակությունն ու բացը:

Գործուն զղջալու կառուցակարգի կիրառման հիմնական մտահոգություններից է **հայեցողական քրեական հետապնդումը:** Մասնավորապես, գործուն զղջալու հիմքով մինչդատական վարույթում անձին պատասխանատվությունից կարող է ազատել դատախազը: Այսինքն, բոլոր դեպքերում, իրավասու մարմնի կամքին է թողնված կիրառե՞լ այն, թե՝ ոչ: **Ծանր և առանձնապես ծանր հանցագործություններով քրեական վարույթի մինչդատական փուլում առանց դատական վերահսկողության և հանրային հաշվետվողականության քրեական հետապնդումը դադարեցնելու հայեցողական լիազորությունը ունակ է պրակտիկայում առաջացնել կամայականություններ, ինչպես նաև կոռուպցիոն ռիսկեր:**

Չնայած նախագծի հեղինակների այն հիմնավորմանը[7], որ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով նախատեսված է դատական վերանայման ինստիտուտը, որն իրենից ենթադրում է կայացված ակտերի բողոքարկման իրավունքը, որոնց պարագայում, եթե հսկող դատախազը կայացնի հայեցողական և չպատճառաբանված որոշում, ապա այդ պարագայում վերադաս դատախազի կողմից կարող է այն վերացվել կամ անձը կարող է բողոքարկել ակտը դատական կարգով՝ ըստ համապատասխան կառուցակարգի, նշենք, որ մինչդատական ակտերի իրավաչափության դատական երաշխիքների վարույթները, ըստ քրեական դատավարության օրենսգրքի, որպես կանոն անցկացվում են գրավոր ընթացակարգով՝ առանց դատական նիստ անցկացնելու, կայացված որոշումները չեն հրապարակվում դատական տեղեկատվական համակարգում, ինչն ուղղակիորեն անդրադառնում է վարույթի նկատմամբ հանրային վերահսկողության հնարավորության վրա:

Հետևաբար գտնում ենք, որ ՀՀ քրեական օրենսգրքում կատարված լրացումը հակասում է ՀՀ միջազգային պարտավորություններին և պրակտիկայում առաջ է բերելու ինչպես մարդու իրավունքների խախտումների և հանցագործությունների արդյունավետ քննության խնդիրներ, այնպես էլ առաջացնելու է այլ խնդիրներ, այդ թվում՝ հայեցողական որոշումների իրավաչափության, հանցանք կատարած անձանց նկատմամբ խտրականության, տուժողների և զոհերի իրավունքների պաշտպանության, արդարադատության մարմինների հանդեպ անվստահության, անպատժելիության մթնոլորտի և հանցագործությունների աճի:

[7] https://www.e-draft.am/projects/5416/digest, https://www.e-gov.am/sessions/archive/2023/07/06/

Հաշվի առնելով ներկայացված հանգամանքներն ու հիմնավորումները, հիմք ընդունելով ՀՀ Սահմանադրության 129-րդ հոդվածը՝ պահանջում ենք Հայաստանի Հանրապետության Նախագահին չստորագրել ՀՀ Ազգային Ժողովի կողմից ընդունված փոփոխությունների նախագիծը և քննարկվող հարցով դիմել ՀՀ Սահմանադրական դատարան՝ ՀՀ Սահմանադրությանն ՀՀ քրեական օրենսգրքում լրացում կատարելու օրենքի համապատասխանությունը որոշելու հարցով:

Իրավունքների պաշտպանություն առանց սահմանների ՀԿ

Հելսինկյան քաղաքացիական ասամբելայի Վանաձորի գրասենյակ

Իրավունքի զարգացման և պաշտպանության հիմնադրամ

Թրանսփարենսի ինթերնեշնլ հակակոռուպցիոն կենտրոն

Ժողովրդավարության զարգացման հիմնադրամ